

ԿԱՐԾԻՔ

Սամվել Մարտունի Ռամազյանի ««Քրոնոլի» էպոսը և հայկական պատմագեղարվեստական արձագանքները» թեկնածուականատենախոսության վերաբերյալ

Մերձավոր Արևելքում Քրոնոլու կերպարը և համանուն էպոսը ոչ միայն ամենատարածվածն ու ճանաչվածն է, այլև առկա է հասարակական, մշակութային, սվորոյթային կյանքի գրեթե բոլոր ասպարեզներում: Տարբեր երկրներում, այդ թվում և Հայաստանում, Քրոնոլու անունով կան հարյուրավոր տեղանուններ՝ բերդեր, լեռներ, աղբյուրներ և այլն: Թյուրքական բանահյուսության առանցք կազմող այս էպոսի ուսումնասիրությանն են նվիրված տարբեր աշխատություններ, սակայն Հայաստանում և հայկական գիտական շրջանակներում ներկայացվող ատենախոսությունն առաջինն է հարցի քննության նման ընդգրկմամբ և դրված գիտական խնդիրների տեսանկյունից: Ատենախոսը՝ Սամվել Ռամազյանը, այս թեման ուսումնասիրում է շուրջ երեսուն տարի, նրա առաջին հոդվածները լույս են տեսել դեռևս 1990-ականների կեսերին: Վստահորեն կարող ենք ասել, որ Քրոնոլու էպոսի հետ կապված անգամ ամենափոքր դետալները ատենախոսին հայտնի են, իսկ շատերը ուսումնասիրված են նրա կողմից:

Ներկայացվող ատենախոսությունը պարունակում է հստակ գիտական նորոյթ, արդիական է ոչ միայն թյուրքական բանահյուսության ուսումնասիրության տեսանկյունից, այլև այն, ըստ էության, տարածաշրջանային կարևոր մշակութային երևույթի հետազոտման հաջողված փորձ է: Առավել ուշագրավ է, որ խնդիրը դիտարկվում է հայկական պատմագեղարվեստական արձագանքների համապատկերում: Այս հարցն ունի, մեր կարծիքով, երկու կարևոր առանձնահատկություն. նախ՝ հայերը լինելով տարածաշրջանի բնիկ ժողովուրդներից մեկը՝ անպայմանորեն պետք է ծանոթ լինեին էպոսին ու դրա արտացոլումները պետք է համապատասխան արձանագրումներ ստանային: Երկրորդ՝ հայերը իրենց հարուստ բանահյուսական ժառանգությամբ կարող էին ազդել էպոսի կամ դրա տարբերակների ձևավորման, առանձին սյուժետային գծերի և կերպարների արտացոլման վրա: Կարևոր ենք համարում փաստել և շեշտել, որ ատենախոսությունը պատմական դեպքերի և դրանց գեղարվեստական, բանահյուսական արտացոլումների համադրական ներկայացման հաջողված փորձ է. սույն ատենախոսության մեջ տեղ են գտել 16-17-րդ դարերում մեր տարածաշրջանի կարևոր հասարակական-ոազմական զարգացումներից մեկը՝ ջալալիների ապստամբությունը: Պետք է հատուկ նշել օգտագործված աղբյուրների և գրականության հարուստ ցանկը, որը ևս տարիների համակարգված և հետևողական աշխատանքի դրսևորումներից է: Ատենախոսությունը շարադրված է լավ, գրագետ հայերենով և կիրառված է հարուստ ու յուրահատուկ բառապաշար:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից՝ համապատասխան ենթագլուխներով, եզրակացություններից և օգտագործված աղբյուրների

ու գրականության ցանկից: Ներածության մեջ ներկայացված են աշխատանքի արդիականությունը, նպատակները, գիտական նորույթը, աշխատանքի գիտագործնական նշանակությունը, ինչպես նաև օգտագործված աղբյուրների և գրականության տեսությունը:

Ատենախոսության առաջին գլխում ուսումնասիրվում է Քյոռոլլու էպոսը և տրվում 17-րդ դարի հայկական պատմագեղարվեստական արձագանքները: Մասնավորապես՝ խորքային վերլուծության են ենթարկված Առաքել Դավրիժեցու, Ավետիք Տիգրանակերտցու, Գրիգոր Դարանաղցու, Ազարիա Սասնեցու և Երեմիա Քյոմուրճյանի հաղորդումները: Ատենախոսը կարողացել է վեր հանել այդ հարողորդումներում էպոսի հիմնական սյուժետային գծերի, կերպարների նկարագրության առանձնահատկությունները:

Երկրորդ գլուխը նվիրված է արդեն 18-րդ դարում էպոսի զարգացմանը. ներկայացված են ինչպես հայ հեղինակների հաղորդումներն ու հիշատակությունները, այնպես էլ մանր ժամանակագրությունների հաղորդումները: Վերլուծության են ենթարկված էպոսի հետ կապված այս արձագանքների թեմատիկ, ժանրային, կերպարային առանձնահատկությունները:

Ուշագրավ է ատենախոսության նաև երրորդ գլուխը, որտեղ ներկայացված են ոչ միայն 19-20-րդ դարերի հայկական արձագանքները, այլև էպոսի հայկական տարբերակները, պատումները: Հատուկ հետաքրքրություն են ներկայացնում հայ աշուղների մոտ էպոսի գլխավոր հերոսի՝ Քյոռոլլուի կերպարի արծարծումները, իսկ հայ գրականության անդրադարձները էպոսին հայկական միջավայրում դրա ընկալման և տարածվածության այլ հարթության մասին են խոսում:

Հատկապես կարևորում են հեղինակի կողմից գիտականորեն, զուսպ անդրադարձը խիստ ուշագրավ մի հարցի՝ հայկական ազդեցությանը էպոսի վրա, զուգահեռները հայկական բանահյուսության մեջ, հատկապես հայոց Արշակ Երկրորդ արքայի կերպարի հետ: Բացի այդ, վերլուծության են ենթարկված այլ հայ կերպարները և դրանց պատկերման առանձնահատկությունները:

Ատենախոսության վերջում ամփոփվում է աշխատանքը և ներկայացված են հիմնական եզրակացությունները:

Ատենախոսության վերաբերյալ ունենք նաև որոշ դիտողություններ և առաջարկներ.

1. Ցանկալի կլիներ, որպեսզի ատենախոսը ավելի շատ տեղ տար Քյոռոլլու և Սասնա ծռեր էպոսների միջև զուգահեռների ներկայացմանը:
2. Ատենախոսությունը հրատարակման նախապատրաստելու պարագայում խորհուրդ կտանք առավել շատ օգտագործել և վերլուծել էպոսի մյուս հայկական անտիպ տարբերակները և պատումները, որոնք ավելի ընդգրկուն և ամբողջական կդարձնեն աշխատանքը:
3. Խորհուրդ կտանք հետագա աշխատանքներում ավելի շատ ուշադրություն դարձնել Մատենադարանում պահվող հայատառ թուրքերեն ձեռագրերին:

4. Անհասկանալի է, թե ինչու է ատենախոսության մեջ կիրառվում Քյոռոզլի տարբերակը, այնինչ ըստ թուրքերենի ձայնավորների ներդաշնակության կանոնի և համապատասխան տառադարձման պետք է լինի Քյոռոզլու:

Սակայն վերը նշված դիտողությունները ամենևին չեն ստվերում ատենախոսության արժեքը. այն գիտական նորույթ պարունակող, արդիական աշխատություն է: Սեղմագրում արտացոլված է ատենախոսության բովանդակությունը, իսկ հրատարակված հոդվածներում տեղ են գտել ուսումնասիրության առանձին դրույթները:

Ելնելով վերոշարադրյալից կարծում ենք, որ Սամվել Մարտունի Ռամազյանի ««Քյոռոզլի» էպոսը և հայկական պատմագեղարվեստական արձագանքները» ատենախոսությունը բավարարում է Ժ. 01.07 մասնագիտությամբ թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող ԲՈԿ-ի պահանջներին, իսկ նրա հեղինակն արժանի է իր հայցած «Արտասահմանյան գրականություն» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին:



Ռուբեն Մելքոնյան
պ.գ.դ., պրոֆեսոր

պ.գ.դ., պրոֆեսոր Ռուբեն Մելքոնյանի ստորագրությունը հաստատում եմ.
ԵՊՀ գիտքարտուղար՝
բ.գ.թ. Մ. Հովհաննիսյան
23.06.2022 թ.

